



Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 2

ՀԱՐՈՐԴՈՒՄ

8 ՅՈՒՆԿԱՐ 1905

Գ. ՊՈՒՈՑ ՀԱՄԱՐ	ԳՆԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՑԱՅՈՂՈՒՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 25 Յր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԴ

ՄԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՏԱՅԻՆՆԵՐԻ, ԵՂՈՑՆԵՐԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճիշտ Պէյ խանիկ սալ, Թիւ 16

Մանաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բնել ՍԱՐԳԻՍՅԱՆ տնունը կեդոյ կարգ մը հարկով ժամացոյցներուն տրոճէ հաւաքարարի վրայ կը օրջին :

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները շեմապէս կը լսանաւարարին ինչպէս նաեւ ՁԵՆԻՉՔ՝ քի/ Կ. Պոլիս, եւ քի՛ Դաւառները, ուրիշ եղամ լսանաւարարին տնայնապէս կը կատարուին զոհացոյցի պայմաններով :

Մակօր. — ՁԵՆԻՉ ժամացոյցները Բարեկի 1900 Աւուստոսեանդեան մէջ անկենց բարձր պարգեւին արժանացած են :

Հասց 40 փարս

Մատենադարան ԱՄԷՆԻ ՀԱՌԱՅԻՆՆԵՐ

(Մարտ) مطبعه مطبعه باب عالي جادى ٢٨

ՏԳԱԳՐԱԻԹԻՒՆ Մ. ՍԱՐԵԵԱՆ

Կ. Պոլիս Գաղղ-Պէյի հասցիս քիւ 25



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՅՈՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/հ 2

ՇԱԲԱԹ

8 Յունուար 1905

ԲՈՎԱՆԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ողջ Չխարիկեան մը (Խմբագրական). ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ. — Սխափանք գրչիք մեջ (Նորաշխարհ). ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ. — Այնքեր ի՞նչ կ'ըսեն. (Տիկին Ա. Տր Դեպ) Թարգմ. ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. — Հիւժում. (Բանաս.) Օ. ՔԱՄԵԼԵԱ. — Յուշախոսքիս եղբ. բեմ. (Ճանրեղի) ՄԱՌԿՈՒԹ. — Պատկեր. (Բերքուած) ԳԱՐՈՒՆ. — Վարսուկեաց փեսիկ ՏՏՈՒՆՅՈՐ. ԼԻԼԱ :

ՈՂՋ ՉԽԱՐԻԿԵԱՆ ՄԸ

Տուայտանքի ճիրաններուն մէջ տապալակելէ և իր ընտանիքը չկրնալ տալիցներու գիտակցութիւնը ունենալէ վերջ, իր կեանքը զոհող Սարգիս Չխարիկեանին պատմութիւնը, — կարեկցութեան առարկայ եղած հանրութեան բոլոր խաւերուն մէջ — անգամ մը ևս կուգայ հաստատել սա ճշմարտութիւնը ինչ ողբատներն ու թշուառները անոնք չեն միայն որ իրենց ամբողջ կը բանան հանրութեան՝ եկեղեցիներու դռներուն առջև, փողոցներուն մէջ, հոս, հան, այլ մանաւանդ անոնք որոնք, արժանապատուութեան զգացումը իրենց սրտերուն խորը, ծածկել կը ջանան զիրենք չարչարող թշուառութիւնները և իրենց ընտանիքներուն ու զաւակներուն հետ, անխօս, անմիմունջ, գէժ կը դնեն բալղին հարուածներուն, մինչեւ որ օր մը ա՛լ չկրնալով տոկալ իրենց ծայրայեղ կարօտութեան, ստիպուին վերջ տալ իրենց կեանքին, Սարգիս Չխարիկեանին պէս, պատուախնդիր մարդու մը յիշատակը ձգելով իրենց ետին :

Քանի՜ քանի՜ ընտանիքներ կան այսպէս, որոնք այս խտտաշունչ եղանակին ո՛չ ածուխ ունին տաքնալու, ո՛չ հաց ունին ուտելու, և սակայն համարձա-

կոթիւն չունին բարեկամի մը օգնութիւնը հայցելու, վախճալով որ մի գուցէ մերժուելու պարագային՝ իրենց արժանապատուութիւնը վերանորոգի և գլխիկար ու պզտիկ մնալու հարկին տակ զանաւիժն աշխատիներու առջին, որոնց՝ բազմաթիւ պատած է թէ և սակայն սիրար անտարբեր է ու անզգայ, ճշմարիտ կարօտեալին ու չքաւորին հանդէպ:

Անկեղծ ըլլալու համար պէ՛տք է ըսել թէ մեր հասարակութիւնը տա՛հաւին չէ՝ կրցած ըմբռնել ըսին բարերարութեան ոգին, և ամէն անգամ որ մեր համայնքին պատկանող մէկը բարերարութիւն մը ըրած է, նպաստելէ աւելի, այս կամ այն կերպով նպաստաւորուելու նպատակը ունեցած է իրեն Բարենպատակ հաստատութեան մը համար կուտանք այսօր նուէրներ, որովհետեւ գիտենք թէ վաղը լրագիրները մեր անունը պիտի արձանագրեն, իբր բարերար, ազքատիկ մանուկներու վրան գլուխը կը կոկենք, կը կերակրենք, կը պատուասիրենք զանանք, որովհետեւ գիտենք թէ մասնաւոր խմբագրականներ պիտի նուիրուին մեր անունին, և եկեղեցիներու քարոզիչներ որբազան բեմերէն մեր գրուածքը պիտի կարդան: Բարերարութիւնը իրաւ իր օգուտները կ'անենայ, և սակայն այս նկատումները չեն դադարի գոյութիւն ունենալէ, ամէն անգամ որ Հայ հարուստը գրպանը տանի իր ձեռքը, ազքատին ու տնանկին ողորմելու համար:

Հռչակուած, և ծանուցուած ազքատներուն աւելի կ'ուզենք ողորմիլ, որ պէ՛տք է մենք ալ հռչակուինք ու ծանուցուինք: Թողի մը տնկիւնը, քաշուած, կծկուած, դարձելու ձախողութեան պատճառաւ իր կնիքով ու զաւկըներով աշնոթի և ծարաւ մնողած լուռ ու մունջ արհեստաւոր մը կամ պաշտօնեայ մը, ինչո՛ւ հետաքրքրէ մեզի որ թմբուկի և փողերու պէտք կ'անենանք, համեստ երեւոյթի մը և պատուախնդիր լուծեան մը տակ ծածկուած թշուառութիւնները լսելու համար: Անոնց ալ պատրաստ ենք օգնելու, սակայն ո՛վ պիտի կրնայ լսել թէ մենք, սաչափ նպաստ մը ըրած ենք անոնց: Ո՛վ պիտի փառաւորէ մեր անունը, և ի՞նչ միջոցով պիտի կրնանք իբր բարերար հռչակել զմեզ ա՛մէնուն:

Թո՛ղ ներողամիտ աչքերով կարգան մեր բարերարները ինչ որ հոս կը գրենք: Սարգիս Չիարիկեանը և իր նմաններ, տակաւին իրենց կեանքը զոհելու դազափարը չյղտցած, շատերու գիմած ու ձեռնունայն վերագարծած են, անոնց տուջեւ արցունք թափած, ու իրենց սիրական զաւակներուն անունով երգում ըրած են որ պատառ մը հայ չունին ուտելիք, տունին տէրը դուրս պիտի հանէ զիրենք, եթէ սա մէկ քանի օրերուն մէջ իրենց պարտքը չվճարեն, ու իրենք՝ նորածին մանկիկներով դուրսը փողոցներուն մէջ, ձիւներուն տակ պիտի մնան, ցուրտէն անպատասպար, փողոցներուն մէջ պառկող չուներուն պէս, անցորդներուն յաճախապէս քամահրանքին ենթակայ: Ասոնք բոլորը պատմած ու գրել-խփկոր ետ գարծած են շատեր: Մեր հարուստները տա՛ւր փարտ չեն տուած, անոր համար որ այդ սոսք փարան անյիշատակ պիտի անցնի և ոչ ոք պիտի կրնայ գտնէ մտքէն անցընել թէ իրենք ձեռնառու գտնուած են բաղդին այդ դժբաղդ զոհին, որուն արդահատեղի վիճակին նկատմամբ, խնդիր չէ թէ, կասկած մ'իսկ չունենան իրենք:

Ուստի քան բայցայց ճշմարտութեան մը արձագանգը բլլալ կ'զգամ այս անգիւղով, երբ կը յիշեմ թէ նոյն այդ Սարգիս Չխարիկեանին անձնատար-նութեան սրտածմբիկ դրաւագէն ետքն էր միայն, որ հանրութեան բոլոր դատա-կարգերը մէյմէկ բարելար հանդիսացան ու իրենց նաւերները փութացուցին ողբացեալ Սարգիսին այրիին, որ իր զաւակին հետ իր ամուսինին մեռելը կուլար, իր սիրականին անշնչացած դիակը տեսներով, տունին առաստաղէն վար կախուած գլխահալ, ցաւատանջ սգեւորի մը հռչակներէն ետք: Հանրութեան բոլոր դատակարգերը, — որքան զարմանալի և եսասէր են մարդիկ — այն ատեն միայն նպատակ ունեցին, աւա՛ղ, երբ զգացին թէ փառաբանութիւնը չպիտի ուշանայ իրենց, խնդիր չէր թէ այդ փառաբանութիւններուն գինը պիտի արժէր պատ-ւականդիր Սարգիսին կեանքը:

Եղածը եղած է սակայն ու ցաւելէ տնդին բան մը չմտար մեզի: Գնա՛ մեռիւր, եկուր սիրելի գրութիւնն է այս մէկ խօսքով, զոր իբր նուիրական ըս-կըզրունք իւրացուցած ենք անխղճօրէն, և հակառակ այս ամէնուն, դեռ կ'ու-զենք որ բարեբար ըսեն մեզի, ու ամէն մարդ անկեղծ ու սրտաբուրդի երախ-տագիտութիւն մը ունենայ իր սրտին խորը, մեր ամէնուս ալ հանդէպ:

X

Բայց ես պիտի գրէի ողջ Չխարիկեաններու և կամ աւելի ճիշդը ո՛ղջ Չխարիկեանի մը վրայ որ այսօր, չորս հինգ զաւակներով անօթի, ծարաւ, թա-փառական մարդու մը երեւոյթը առ ձեռք, քարերուն ու պատերուն կը զարնուի պատառ մը հայ տաներու անոնց որ անսուղութենէ կը տառապին և յիշեն հասկնալու անկարող, մանկական անվերջ թախանձանքներով կը պահանջեն շա-րունակ: Ընտանիքի թշուառ հայր մըն է այս ո՛ղջ Չխարիկեան ըսածս, որ քսու պաշտօնակիցներու պատճառով, յանիրաւի պաշտօնանկ եղած է բարեգործական հաստատութեան մը մէջ ունեցած իր կարեւոր պաշտօնէն, զոր տարիներով այն-քան խղճմտօրէն կատարած է, և ամիսներէ ի վեր հոս, հան կը թափառի, գործ մը ճարելու, իր բազմանգամ ընտանիքն ու զաւակները ապրեցներու համար:

Սիրտ պէտք է որ դիմանայ իր ունեցած անչափ թշուառութեան, գգա-ցում պէտք է որ յուզուի, բորբոքի քիչ մը, իր չափահաս մանկիկներուն լացն ու կոծը լսելով:

Ի զո՛ւր խեղճ մարդը հաստատութիւնը վարողներուն դիմումներ կ'ընէ, որպէս զի լսեն իր խնդրանքը, քիչ մըն ալ իր ըսելիքներուն, իր յայանութիւննե-րուն ականջ կախեն: Անոնք նախապաշարուած են մէյ մը, պարկեշտ և սակայն անպաշտպան պաշտօնեային քսու պաշտօնակիցները լեցուցած են անոնց ականջները այնչափ որ ալ անկարելի կ'ըլլայ իրենց՝ քիչ մըն ալ զայն մտիկ ընել: Որոշումը վերջնական է ու անդառնալի: Յոյս չկայ ալ հոնկէ: Պաշտօնեան հոս հոն կը զար-նուի, ու ո՛չ մէկ գառ կը բացուի իրեն: Պատճառն այն չէ որ, ինքը անարժան մէկն է, այլ որովհետեւ գործ չկայ: Դպրոցներն ալ ամբողջ իրենց ուսուցիչները ունին, որպէս զի խեղճ պաշտօնեան, որ արժանաւոր ուսուցչի վկայական մըն ալ ունի, գտնէ անոնց մէջ իբր ուսուցիչ պաշտօնավարէ:

Ու թշուառութիւնը ալ իր գաղաթնակէտը կը հասնի. կազանգի, Ծնունդի օրերը կը մօտենան, ծախքերու գուռերը կը բացուին, մինչ օրապահիկն իոյ հողալու անկարող է լքուած պաշտօնեան, որ ողջ Ձիարիկեան մըն է գործած, հանրութեան դռնին գերազանցապէս արժանի:

Ու լսել թէ նոյն այդ հաստատութիւնը վարողները չեն վարանած հաստատութեան անունով ժողովուած գումարներէն դրամական նուէր յատկացնելու ինչ մէկ պաշտօնեայի, ճիշդ այն միջոցին երբ չեն խղճահարած անչօփառ հաստատութեան տէր հօր մը պաշտօնը խլել այս վերջինին ձեռքէն, մէկուն ընծայուած չնորհը միւսին զրկանքովը ծածկելու նրբամտած գաղափարականով:

Հաստատութիւնը վարող անհատներուն արժանիքն ու հեղինակութիւնը սակայն, պատուարեր իրենց անունին ու ազգին, թոյլ չեն տար մեզի որ բացատրութիւն պահանջենք իրենցմէ այս անօրինակ չնորհաբաշխութեան առթիւ. իրենք մեզմէ գերազանցապէս լաւ կը դատեն անշուշտ իրերն ու գործերը. դոնէ այնպէս կը հաւատանք, Միայն, յանուն այդ հաստատութեան, կը խնդրենք որ պաշտպանուած պաշտօնեաներու էնքրիֆներուն չզոհեն հաստատութեան սրբան բարոյական նոյնքան ալ նիւթական շահերը, սրտք ամէն տնձնական նկատումներէ գերիվեր պէտք է ըլլան անշուշտ, իրենց հանրային հանգամանքով:

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

“ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ” Ի ՄԵՐ ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ խմբագրութիւնը կը փութայ իր խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնել ՄԱՆՁՈՒՄԷԻ ԷՖԲՍԱՐ ժողովրդական եւ սիրուած Հայաբերին. արօճաճէր Ազն. Յովհաննէս ԷՖ. Ֆ. Գալսեփեանի եւ իր Պատուարժան խմբագրութեան, որ մեր նախորդ բացառիկ բիւիոն առիթով, գնահատական եւ սիրալիք տղերով ողջունեց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ երեւումը մեր խմբագրութեանը սակ, եւ իր սիւնակները լայն բացաւ ազնուաբար, ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ բացառիկ բիւր իր ամբողջութեամբ պատկերացնելու բնութեցող հասարակութեան:

Մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ նաեւ «Հանրագիտակ»ի խմբագրութիւնը, իր բացառիկ բիւիոն եղեր զարդարող՝ Սիւրի, Անայիս եւ Գ. Զարուհի տղիկներուն, Օր. Հայկանոյ Մանի, եւ Հրանդ Ասատուր, Բասիմ, Երուանդ Տէր-Անդրեասեան, Աղեֆ. Փանոսեան, Թեոդիկ, Ժիրայր Եփրակացի, Եղուարդ Գոյանեան, Յակոբ Տէր-Յակոբեան, Բանագող Լոռիքիւնեան, Յովհաննէս Ազնաւորեան, Լեւոն Շարեան, Տիգրան Դասապեան եւ Օ. Բաւեղեա Էմիլիաներուն, որոնք հաճեցան իրենց գոյքի գրութիւններով պնեն մեր բացառիկ բիւր, որուն ամբողջ սպառնումը ինքնին գրական մ'է արդէն ժողովրդեան մէջ իրենց գրուած համակրանքին:

ՍՓՈՓԱՆՔ ԳՐԶԻՆ ՄԷՋ

[ՆՈՐԱՎԵՊ]

Ճաշը լուսեմամբ անցած էր :

Նախադասացումը ճնշեր էր արդէն գինքը մինչև ոսկորներուն ծուծը: Երեք թուղ կերաւ: միայն ու անձեռացը յամբօրէն ծալելով վեր ելաւ, որան, ուր հօրեղբայրը կըստարէր: Սխառտակը գոցուած էր արդէն անոր գալը լսելուն, որուն մէջ բան մը կար, թաղուածը կը հասկնար: Սուրճը միասին լամպին հոն, հայրն ու մայրն ալ հաւաքուած, որ ատեն սկսեալներու միօրինակ տատանումները սքողող հաստ սիկառներու թանձր մուկէն անհանգիստ՝ կոկորդը քերելէն՝ բերան բացաւ մօրեղբայրը, որ գաւառացիի պինդ-գլուխ, ինքնահաւան, յամառ թիփ մըն էր:

— Այ այո անգամ խօսքը իմս պիտի ըլլայ, չէ՛ չկայ:

Ալիս չէր սխալած իր նախադասացումին մէջ. վաճառականութիւն կար նորէն, հոգիի, սրտի վաճառք: Զգացած խորունկ սարսուռը պարտկելու ճիգով աթոռը թողնով մութ անկիւն մը քաշուեցաւ դեփուեղին:

— Ս... Մ... եան, հարուստ, գեղեցիկ, երիտասարդ, ուռեալ...

Մնողքը փառամբութեան տենչէն բռնուած՝ ձայնեցին. «հարուստ, գեղեցիկ, երիտասարդ» արհեստը... — վաճառական:

Մինչև այդ ատեն անկիւն մը կծկտող զոզացող Ալիս ձայնեց յանկարծ, տեղուած ու վախկոտ ըմբոստութեամբ մը:

— Հարուստ չեմ ուզեր, գեղեցիկ չեմ ուզեր, վաճառական չեմ ուզեր...

Վեց ականքներ կրակ կտրած՝ նախատինք մը կը փնտռէին գծախտ աղջկան գլխուն տեղացնելու համար, որուն սրտին արդէն նուիրուած ըլլալը կ'անգիտանային, եթէ ոչ չպիտի զիջանէին հարկաւ իրենց փեսան յորջորջել իտեալ մը՝ զոր իր բացուցած էր իրենց աղջիկը: Ասիկա եթէ քաջարձակ ալ չէր ըսուած՝ գէթ հասկցուած էր աղջկան՝ օրինակներով, որ կը զօգար իր ծնողաց ատենի յայտնութիւն մը ընելու: Եթէ մայրը կտրեց:

Այս գործին յաջողութեան մասին աշխատելու բաժինը մօրեղբորը ձգելով՝ խնամքակր անցաւ թուղի սեղանին շուրջը, հրաւիրելով նաեւ Ալիսը, զոր հիմակուրնէ իսկ արդէն նշանած կը նկատէին, դուարճանալով իր «Փիսիկի քարոսներ»ուն հետ:

* * *

Հիմակ այդ աղջեցութիւններուն տակ սիրտը երկուքի բաժնուած էր կարծես. կը խորհէր Ա.ը, որուն նուիրուած էր արդէն. հիմակ միտքին առջեւ կը գծադրուէին այն դիմագիծերը զոր ան պիտի չինէր՝ «Քեզի հետ չեմ կրնար ամուսնանալ, ուրիշի մը պիտի տան» զիս»ը իր բերնէն լսելով. չէ՛, չէր կրնար ըլլալ ատիկա, տառապեցնել, մեռցնել էր զայն իր սրտին հետ, որ խենդ կտրած կ'աստուածացնէր զինքը:

Խօսուած այդ քանտրուած զրամով հարուստ պիտի ընէր զինքը, սիրով՝ երբէ՛ք. փառք պիտի տար իրեն, բայց սիրտ՝ բնաւ: Դիտնալով հանգերձ բոլոր անոնք հաստատապէս, ստիպման տակ տկար հակում մը կ'ունենար այս նորեկին հանդէպ, մինչ լսելով հիմակուրնէ իսկ աչքին առջեւ կը բերէր ինքզինքը հարսի հազուատներով, տաճարի վեհաշուք սրբութեանը մէջ, գլուխը հակած գլուխի մը՝ զոր նոր ճանցաւ և աչքերովը ի դժուր փնտռելով գողգոջ ուրուսպիծը Անոր՝ զոր սիրեց. վառն զի չպիտի գար, չէր գար հարկաւ:

Թեւի պէս բարակ բայց աղքատ սարսուռներ կ'ապշտէին իր միսերը ու պահ մը հեռացած սրահէն, վեր դնաց, իր ննջատենետեղը, ուր հարկաւ դիչերի հանգիստը իրեն համար չէր: Լուցկիի տուփ մը փնտռեց ու նիհար մատներովը փայտիկին կոթէն բռնած՝ քսեց զայն քովեալ. մութը արիւնտեցաւ կարմիր լոյսով մը, պահ մը սարսուռաց, բոցերու մէջ մնացած կարծելով մտացիր, և անոր համոզուելով թէ լուսավառութեան գիչերունէ մնացած գունաւոր լուցկիի տուփն էր ատիկա, իսկոյն ճրագին մօտեցուց: Իր գէմքը նոյն պահուն հալկին առջեւ դալհահար տեսնելով ամչցաւ նոյն իսկ իր անձէն, ու թօքերուն չոյր ուժովը շարձակեցաւ վտիտ բոցին վրայ, ու մարեց զայն: Թուրք յարաճուն ծալքեր կը բազմապատկուէին:

էին առ տակաւ, ուր կրնար խոկալ տաւան-
ձին, որմերու բարեկամ գաղտնապահութե-
նէ մը անկասկած: Ըսեմ, կը խորհէր, այո՛,
ընեմ իրեն թէ մարմինս այդ մարդունն է
բայց սիրտս, հոգին միտ իրեն, աղաչեմ, պա-
ղատիմ իրեն, որ թողու զիս ծնողական
ձայնին անսալու, կը սիրեմ զինքը նորէն...:
Բայց կը հակադառնար, վատութիւն է հան-
դիստւորը երգումէ մը վերջ խաբել իր կէտը,
ինքզինքը գրեթէ չէ, չէր կրնար քնալ
իսկ մոռնալ միւրը, Ե՛, քնալ:

Ինչպէս տեսնուեցաւ, անփորձ հոգի մը
կը կրէր Ալիս, հոգի մը լոկ իաշալով անած,
որ անհիւստութիւնը կը փնտռէր, առանց
կարենալու ծնողական ազդեցութիւնը իր
վրայէն թօթափելու: Ա.ը սիրած էր, վառն
զի կրնար սիրել: Իսկ քանտիտաները...
հոգ ալ ծնողական ձայնին անխուսափելի-
ութիւնը կար, որուն հլու պէտք էր գոհել
իր սիրտը:

Սէրը վաղանցուկ ծաղիկ մըն է, խորհե-
ցաւ պահ մը ընկճողն, որ ամուսնութեան
սեմին վրայ կը թարչամի, մինչ դրամը սէ-
րեր կը բերէ: Նոյն իսկ Ա.ը չի պիտի պահէր
դարձեալ նոյն սէրը իրեն համար, երբ ինք
Տիկին Մ... եան եղած իր ձեռքը տար ա-
նոր շրթունքներուն: Բայց ո՛չ. հպարտ էր
այդ համեստ տղան, որուն առեղծուածա-
յին բնութեան գաղտնիքը միայն ինք կրցած
էր երեւան հանել. ո՛չ, չպիտի գար իրեն ե-
րեան իսկ նայելու: աղէկ դիտէր թէ արհա-
մարհանքի թունալից թուքը իրեն ճակտին
կը սպասէր:

Ինչ ընել:

Մեանիլ լաւագոյն էր. սակայն ընտանի-
քի անունը կը մտածէր, ընտանիքի անունը
որ իրմով պիտի աղարտուէր...: Յոգնած,
յուստահատ դէմքը բարձին դրաւ. զօրաւոր
հեծկլտութի մը մէջ պիտի խեղդուէր. չուն-
չը կը սպասէր...: Մ՛հ, եթէ Ա.ը դիտնար
թէ ինչ կը քաշէր ինք, անշուշտ պիտի ար-
տօնէր իրեն վեհանձնօրէն, ձեռքը տալու
ուրիշ մը. բայց այդ բանը, զինքը, այնքան
զգայուն, կը մահացնէր. Անոր ներումին մէջն
իսկ կը գտնէր լուին թոյն մը աղնուօրէն
մատուցուած...:

Ինչո՞ւ սիրեց. ուրիշ անմիտ հարց մըն ալ
եկաւ զինքը բռնել. հազար անգամ լաւ

էին հաշիւի ամուսնութիւնները, ուր միա-
քը կը յորհէր, առանց սրաք խանգարման:

Մտիքը նօրէն արիւնոտած էր:

Սեւ գրադարանին առջեւ խառնափնդոր
թուղթեր, համակներու, քառթ-բօթալնե-
րու դէպքերու մէջ, կապոյտ գիշերադգես-
տով նստած, որուն ծծիքը ամբողջովին բաց
մնացած էր լոռերու տուած անհոնգատու-
թենէն, Ալիս նստած կը գրէր ուռեցած
աչքերով:

Արձանագրութիւն մըն էր պոփկա, իր
յուշառարին մէջ, գրականացած մէկ մասը
անոր, վէպի պէս. իր կեանքէն այս իրաւէ-
պը կը դնէր հոն: Երբ վերջին բառն ալ ա-
ւարտեց ու ծծուրը պարայտաց անոր վրայ,
ծայրէն կարդաց անգամ մը: Ծիչդ էր: Իր
զգացումները զոր միտքով չէր կրցած մեկ-
նել զրիչը յաջողած էր զանցնէր նկարելու, ու
պատկերացած տեսնելով ինքզինքը հոգ,
թուղթին վրայ, իր ձեռքով՝ գոցեց աչքերը
երազելու համար, անդրադառնալով, ինքն
իր վրայ:

Ու ապակալին մրափ մը չեկած՝ պահա-
րանի մը մէջ զեպեզեց այդ էջերը: յուշա-
տետրէն փրցունելով, որուն վրան Ա.ին հաս-
ցէն գրեց: Վաղը պիտի ստանար զայն Ա.ը
գիտակից բլաւալ համար իր տառապանք-
ներուն:

Գլուխը դէպ ի պատին կրթնուց, թիկ-
նաթուղի վրայ կիսամիտ ընկողմանած, քու-
նը տարեր էր: Հանդարտ իր երեւոյթէն, ու
այն անոյշ ժպիտէն որ զծագրուեր էր դէմ-
քին վրայ, կարելի էր հեռուցնել թէ խա-
ղաղած էր իր հոգին, սիոփալար գրչին
տակ, որ իր տառապանքը նիւթացուցեր
էր թուղթին փոխանցելով...:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ

ՁԵԿՈՅՑ

Մեր այն գաւառի բաժանորդներուն, ու-
րոնք տակաւին չեն զրկած իրենց բաժնե-
գիրը, չպիտի զրկուի Հանրագիտակ յաջորդ
շաբթուրէն սկսեալ: Իսկ անոնք որ կ'ուզեն
նոր բաժանորդագրուիլ Հանրագիտակի, պար-
տաւոր են կանխիկ վճարել բաժնեգիրը
մանցաբօրով:

ԱՂՔԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

Աղքերը չափանշանապահ են և իրենց տարածութեամբը գոյնովը, արտայայտութեամբը մարդկության հակին խորին, ամենախորին խորշերը ի յայտ կը բերեն :

Ընդհանուր առմամբ, մութ աղքերը շատ աւելի արտայայտիչ են քան բոլոր գոյն աղքերը : Հոգիին ներքին յուզումները անոնց վրայ կը ցոլանան : անոնք իրարու ետեւէ կը յայտնեն ամենէն խառնակ և խառնէն տարրեր գագուռները : Աղքին ծիածանը որ չափ տփգոյն ըլլայ, հայելին այնչափ նուազ հաւատարիմ կ'ըլլայ : Պատկերները դժուարաւ կը կազմուին հոս և շուտ մը կ'անհետանան :

Ռամիկ լեզուն խիստ ճշտօրէն կը բացատրէ այս ճշմարտութիւնը, «բան մը չ'ըսող» աղքերը անոնք են ուր հողին, իր բացահայտեցողութեան պտտածաւալ, չկրնար ցոլանալ :

Աղքերը, ծիածանին գոյնին համեմատ, կը դասակարգուին չորսի՝ սե, կոպոյտ, մոխրագոյն և կանաչ աղքեր : Այս տեսակներէն իւրաքանչիւրին կը համապատասխանեն իրենց պատկանած խառնուածքին պատկանութիւնները և յատկութիւնները :

Առանց զարմանալու պիտի հաւատանք արդեօք չիտալը ըսելով, սե աղք չիկայ, բացարձակ սեւը գոյութիւն չ'ունի : Ամենէն մութ աղքերը անոնք են որոնց մէջ բոլոր արտաքին կարգի բացումն է այնպէս որ պայն չըջապատող չափանկագոյն չըջանալը իր լայնաթիւ փոքրագոյն ատտիճանին վերածած է :

Խիստ միթին աղքերը ուժգին դգագուռներ և բուռն ցանկութիւններ կը նշանակին զոր օրինակ եռանդ, բարկութիւն, քաջութիւն, վայելելու ծարաւ, եայլն :

Դորչագոյն աղքերը նոյն բանը կ'ըսեն, բայց դգագուռները, ցանկութիւնները աւելի անոյշ և աւելի լաւ հաւասարակշռուած խառնուածքով մը տկարացած են, եռանդը աւելի հանդարտ է, կամքը աւելի պայծառ և արուեստագիտական ոգին վարդապաշտ :

Բայց գոյն աղքերը ընդհանրապէս անոյշ և քաղցր դգագուռներ կը յայտնեն, կապոյտ աղքերը պարզութիւն և քաղցրութիւն, թէ որ կապոյտը շատ քաջ ըլլայ ոյս յատկութիւնները տկարութիւն կը կոչուին, միտքը անորոշ, վախիզոտ, անկայուն և թափառական վիճակի հակումէն կ'ըլլայ, արեւակնի գոյն կապոյտը վառաւոր չութեան կըստ գոնէ փափկակազմութեան նշանն է :

Մոխրագոյն աղքերը շատ միթուն բաներ կ'ըսեն, աշխատութեան մէջ աննկունութեան, համբերատարութեան, բարոյական ուժի, չարածիտութեան նշանակութիւն ունին, գիտուններու, փիլիսոփայներու աղքերն են անոնք յաճախ : Կարմիրով գծաւորութիւնները իրենց սիրուն նշանակութիւնները կը կորսնցնեն :

Կանաչ աղքերը ինքնամոռնութիւն, անտէրութիւն, ապականեալ հոգի, չարութիւն կը յայտնեն :

Նախնական ժամանակներու արուեստագէտները ամենքն ալ թէզգէթուղը (*) կանաչ աղքերով երեւակայած են : Երբ ամէն կերպով բարի, ուղղամիտ, պգայուն երեւցող մարդիկ այս տեսակ աղքեր ունին, այն ատեն պէտք է եղբակացնել թէ կորովի դատարարութիւն մը, հիանալի կամք մը այդ մարդերուն նոր ընտելութիւն մը կազմել տուած են :

Դատարարականութիւնը սքանչելի մոզուէի մ'է որ թերութիւնները յատկութիւններու կը փոխէ :

Մարդու մը ներքինը ծիածանին գոյնովը չ'է միայն որ կը յայտնուի, այլ նաեւ աղքերու ձեւովը, կոպերուն յօրինուածքովը, նայուածքին ուղղութեամբը :

Պզտիկ և աշխոյժ աղքերը ժիր և խորաթափանց միտք մը կը յատկանշեն, յանդուգըն երբ ըլլան, սրամտութիւն կը յայտնեն : ակնակապիճներու մէջ թաղուած՝ զրական միտք, դործնական և քանսարկու ընտելութիւնն է որ կը մասնանշեն, մագերուն շատ մօտ՝ բանաստեղծութիւն և երեւակայութիւն, իրարու խիստ մօտ՝ ճարտարութիւն : Վերի արտեւանունքը եթէ ծալուած ըլլայ

(*) Չար ոգիներու պէս ստատանայ :

լրբութիւն և անհոգութիւն կը յայտնէ, մըսեղ կողերը՝ համարձակութիւն, բարեսիրութիւն, ծուլութիւն. թափանցիկ կողերը՝ խորամանկութիւն, չարամտութիւն և դրական միտք: Քնացող նայուածքը մտքի գանդաղութեան յատկանիշն է, հատուտ նայուածքը՝ կորովի, անոյշ նայուածքը՝ սրտի փափկութեան և բարութեան, թափառող նայուածքը՝ թեթեւամտութեան, անհանգիստ նայուածքը՝ երկչոտութեան:

Սակայն կրնայ ըլլալ որ աչքերը սուտ խօսին, անոնց արտայայտութիւնը բացառութեամբ և հաստատութեամբ պէտք ունի, անոնք բերանացի արուած դատողութիւններուն շատ անգամ հակառակը կը յայտնեն, «խօսէ, որ տեսնամ քեզի» կ'ըսէ հին իմաստութիւնը:

Նայինք միշտ խօսողներու աչքերը ի՞նչ կ'ըսեն, բաղդատենք անոնց լոբին բայց արտայայտիչ լեզու չըլծունքներուն շատ անգամ վատնած հանճարեղ խօսքերուն հետ, այս բաղդատութեան բերմամբ մեր վճիռը մեծ փոփոխութիւն պիտի կրէ:

Յօնքերը աչքերուն լեզուն կ'ամբողջացնեն:

Երբ քթին արմատը կը միանան՝ յամառութիւն, դիւրապզգածութիւն և երբեմն նախանձոտութիւն կը նշանակեն: Իրարմէ հեռու՝ քաղցրութիւն:

Բարակ և նուրբ աղեղի ձեւով՝ արուեստագիտական ոգին է:

Յօնքերուն յատկութիւնը՝ տկարամտութիւն և հոգեկան կարողութիւններու հաւասարակշռութեան անկայուն ըլլալը կը յայտնէ:

Այս դիտողութիւնները մտքերնիւ պահեցէք, իմ մասին անոնց արժէքը շատ անգամներ ստուգած եմ: Ճշմարտութիւնը մարդու աչքերուն մէջ կը պահուի, նայուածքներ կան՝ որոնք յսնկարժ կը մտնեն զայն, այդ նայուածքները ճանաչայթներն են այն հայելին՝ որուն մէջ ճշմարտութիւնը կը նայի և այդ ճանաչայթներու անդրադարձումովը ճշմարտութիւնը մէջ տեղ կ'ըլլայ, ի յայտ կ'ուզայ իր էական վիճակին, իր մերկութեան մէջ, բայց ասոսոր աչքի առջև ելլող պատկերը միշտ ազատ է ըլլար:

Բ.

«Գեշ աչք» ունեցող մարդիկ կ'ան.

Գատողութիւնը պիտի ուզէր որ այս հարցումին ժխտական պատասխան տայի, բայց ամենօրեայ դիտողութիւններս այս ըսել կուտան: Համաձայնիք սակայն. Չ'եմ հաւատար «գեշ աչք»ին տրուած բուն վճիռին, այսինքն Իտալացոյ ըսածին պէս «Jettatura» ին:

Հանճարեղ պատմիչ մը, Թէօֆիլ Կօթիէ, զոր օրինակ կրնայ իր «Jettatura»-ն ներկայացնելու համար, գրաւիչ և վիպային ոգի մը երեւակայել, տարբեր բան է օրական կեանքի մէջ այս վնասակար էտիլին հանդիպել:

Նրկայելի բարոյականի տէր մարդիկ մտքնիւ կարողութիւն մը ունին, զոր տկար էակներու վրայ կը գործածեն զանոնք վնասակար կերպով թեւադրելու համար:

Մութ, առանց ցոլքի աչքեր գիտեմ՝ որոնց նայուածքը գէշ բաներով լեցուն ծովի մը վրայ բացուած լուսանցքի մը կը նմանի, կանանչ ջուրի դոյնով աչքեր՝ որոնց վրադուզած նայուածքը սողունի մը հպումին պէս ֆիզիքական աղդեցութիւն մը կ'ընէ, այս աչքերը վտանգաւոր են, և ասոնք վնասակար, անուղղամիտ և բանասարկութեան խորին տաղանդով մը օժտուած անձերու կը պատկանին: Ասանկ կասկածելի մարդիկներու հետ բնաւ յարաբերութեան մէջ չ'մտնել խելացութիւն է, և այսպիսիներուն ճամբուն վրայ հանգուիլն ալ միշտ դժնգակ բան մ'է:

Գալով բուն «գեշ աչքին», մէկ մ'աղ կ'ըսեմ, գոյութիւն ունենալուն ապահով չ'եմ, հակառակ քանի մը երկիրներու, ինչպէս Իտալիոյ, Գերմանիոյ, Գաղղիոյ միջին գաւառներու և Սպանիոյ մէջ խիստ տարածուած հաւատք մը ըլլալուն: Սակայն կը հաւատամ թէ երջանկութիւն կամ դժբաղդութիւն բերող մարդիկ կան:

Գիտէք թէ պաշտպանութեան միջոցներ հնարուած են: Աւանդութիւնը քանի մը առարկայներ, շարժումներ կը յիշէ, որոնք կախարդանքը կը հեռացնեն:

Ամենէն արգիւնատար հուշակուած հետաւոր (tatisman) խաղալիքի ձեւով քիմուած

կատուի մագիլն է : Կոտուշը , բասար , բիւ-
րեղը նաեւ ընդունելութեան արժանացած
են , կարուած և աչքի ձեւով աղակերի կը-
տոյն ալ նախապատուելի է :

Ձախ ձեւքի բխամառին և ցուցումատին
խաչաձեւ իրարու վրայ գրութիւն պահպանող
շարժում մ'է : Ձախ ձեւքը կարելի եղածին
չափ վեր բարձրացնելն ալ յոռի ազդեցու-
թեան ճամբան չեղեցնելու համար սքանչելի
միջոց մ'է :

Քսան տարի առաջ Պիատրիցի չրջակայ-
ները կին մը կ'երթար կ'ուգար որ բախտ
ձգելու սատանայական արհեստով կ'զբա-
ղէր : Այս կինը « գէշ աչք » ունէր , այն
նայումքնորէն որոնց վրայ խօսեցայ : Դեռ
աչքին առջեւն է : Մազիկներով , պտուղ-
ներով և բանջարեղէններով , մանաւանդ կա-
ղամբի տերեւներով լեցուած կողով մը կը
կրէր հետը : Ամէն արգելքի դէմ գնելով
տուներէն ներս կը մտնէր : Այս մանր վա-
ճառակները բան մը չ'էր ծախեր , որովհետեւ
իր օղորանքին համար չափազանցուած գի-
ներ կը պահանջէր : Զօրօրինակ . խուրձ մը
լիւսյի համար 100 սու , քառորդ լիօրա
գետնախնձորի համար 3 ֆրանք ուղեւու
չ'էր վարաներ : Իր սակառը , գոց վանդա-
կաղատներէն անդին անցնելու համար , գոր-
ծիք մ'էր միայն : Մեկնելէ առաջ անպատ-
ճառ ժամը կը հարցնէր :

Յուրի ազդեցութեան ազդեցալի վայր-
կեանն էր այս : Շիտակը պատասխանելէ
զգուշանալու էր , ապա թէ ոչ « բախտ »ը
կ'իջնէր անողորմ . քառորդ ժամու վերի կամ
վարի տարրերութեամբ կ'ըսէին ժամը , և
այսպէսով զժրագրութիւնը մէկգլխով վանուած
կ'ըլլար : Կինը ահաւանքը կրճտելով կը հե-
ռանար :

Չ'եմ կրնար հաւատալ թէ՛ ամբողջ տա-
րին ամեն ճամբաներու , ուղիներու վրայ
թափառող այս կինը , այդ սատանայական
կարողութեամբ օժտուած ըլլայ , սակայն
չրջակայ դաւաճներու մէջ ընդհանուր սար-
սափ մը ազդած ըլլալ ստիպուած եմ ըն-
դունիլ : Մանօթներէս ոմանք , որուն ազուշ
է՛լլալը կը հաւատտեն , այս Քստակար կը-
նոյմէն զարնուած ըլլալին կը հաւատան :

Լիօնի բարձր դատուն մէջ տեսչալի զիբը
մը գրաւող և լուսաքիչ բարեկամաշէններէս

մին խեղճ մայր մը իր առջիններէն մահը հե-
տեւեալ գէպքին կը վերագրէր : Ժամացոյ-
ցին երեք զարկած միջոցին այդ կնոյ , ժա-
մը երեք է որոտասխաներ է եղեր : Արդ ,
անկտրելի է այդ գաղափարը խեղճ մոր
մտքէն վանել :

Ապահովաբար գոնգակի պուգաղիպու-
թիւններ պատճառ եղած են որ այս աւե-
լորդապաշտութիւնը այն երկիրներու մէջ
արմատանայ : Աչքը մագնիսական աներկ-
բայելի ազդեցութիւն մ'ունի : Աչքին մի-
ջոցաւն է որ քնտրէր հոսանքը կը փխտանց-
ուի , չափ անգամ գիշերաչրջիկներու յա-
տուկ քունը յառաջ բերել կը բաւէ : Խօսքին
չափ , շարժումէն աւելի նայուածքին մէջն է
որ կը կայանայ մարդուն ամբողջ հոգեբա-
նութիւնը :

Ամենէն տարբեր զգացումները արտա-
յայտութեան զարմանալի սասակութեամբ մը
հոն կը ցոլանան : Աչքը կը յօնգրմանէ կամ
կը շոյէ , կը հրամայէ կամ կ'աղերսէ , կը
ժպտի կամ կուլայ : Անիկա հոգիին խորու-
թիւններուն վրայ բացուած խորհրդաւոր
լուսանցքն է :

Զգուշանանք ոչ թէ « գէշ աչքէն » , այլ
գէշ աչքերէն :

Գ .

Շանքի հարուածը (Սիրոյ մեջ)

Շատ անգամներ հարցուցած են ինծի ,
« կը հաւատա՞ք շանթի հարուածին » :

Կայծը , ելեքտրական բաշխումը , մէկ
բաւով սիրոյ մէջ յանկարծական հարուածը
զօյութիւն ունի :

Այո՛ , եթէ այս ասացուածը առնենք մէ-
կէն ի մէկ զգացուած բուն համակրու-
թեան մը իմաստով , համակրութեան մը որ
ամենակարեւոր որոշումներու և ամենէն
չապաստուած հետեւանքներու տեղի կուտայ :

Թուս գիտնական մը կը պնդէ թէ մարդ-
կային մարմինը ելեքտրական բարդ մ'է և
թէ տարբեր կերպով ելեքտրականացած մար-
միկներու միջև հոսանքներու փոխանցումներ
տեղի կ'ունենան :

Նման հոսանքները զիրար կը վանին , իսկ
հակասեանքը զիրար կը քաշեն և անկէ է
որ կը ծնին համակրութիւնները , հակակրու-
թիւնները :

Եթէ Քիզիբապէս ճիշդ չ'է բարոյական տեսակետով բացարձակապէս ճշմարիտ է :

Անդիմադրելի զգացումներ կան, որոնք անբացատրելի չեն կարծութեամբ մը կը պայթնուին Ամենքս ալ տեսած ենք այս երեւոյթը և չատ անդամ : Հարկ է անելցնել թէ՛ այս ինքնակամ պայթումները քիչ տեսչութիւն ունենալուն համար այն ալ ունին արժանի են : Երկրորդապէս համակրութիւնները փոխադարձ երկարատեւ ծանօթութեան մը վրայ հիմնուած են :

Մէկ մը որ այս վերապահութիւնը ըրինք, չանթի հարուածը ժխտելի չ'է : Առաջին անգամ զիրար տեսնող երկու էակներ իրարու կը ձգտին վայրկեանապէս և անդիմադրելիօրէն :

Երկու ամուսիններ կը ճանչնամ որոնք քսան տարի վերջ դեռ մեղրալուսնի ժամանակները չ'են անցուցած : Արդ իրապէս չանթի հարուածն էր որ պայթեցաւ անոնց միջեւ :

Երկու քն ալ իրարու անծանօթ, մի և նոյն պարտանդէսին, նշանտուքի պարտանդէսի մը հրաւիրուեցան : Իրարու նետուած առուջին նայուածքէն իւրաքանչիւրը ինքնիրենը բնաւ . « Ահա օրիորդ մը, ահա երիտասարդ մը որ կ'իրազորէ գաղափարական » :

Ո՛վ է :

Անուշեղիք տեղեկութիւնները, կատարուելիք ներկայացումները, խօսք կապի նախապատրաստութիւնները վեց չաբաթ միայն տեսնցին :

Ուստի գիտնականին տեսութիւններուն համեմատ այս երկու էակները հակասեալ ելեքտրականութիւններով օժտուած էին, բաղխումը անդիմադրելի եղաւ :

Իրօք ալ կարելի եղածին չափ աննման են իրարու, ինչ որ առաջին և հարկեցուցիչ պայմանն է :

Իրարու հետ լաւ համաձայնելու համար ընտելեամբ և խառնուածքով նման ըլլալու չ'է, ընդդիմադրութեան բնաւ չհանդիպելու չափ յուսահատեցուցիչ բան չ'կայ :

Գաղափարներու բաղխումէն է որ լոյսը կը ցայտէ կ'ըսեն, զգացումներու բաղխումէն է որ սիրտը կը ցայտէ :

Հարկ կը տեսնեմ աւելցնելու թէ՛ պէտք չ'է չանթի հարուածի վրայ բացարձակապէս

յոյս գնել ոչ ալ զգացումի մը արժէքը և տեսչութիւնը իր յանկարծականութեամբ դատել, իմաստութիւնը կը պահանջէ որ մեզի ամենէն նուազ վիճելի երեւցած բաներն իսկ քննենք : Երբ մարդ անխորհուրդ կերպով կը նետուի ամուսնական կիանքին մէջ որ չատ մը որոգայթներով սերմանուած է, չատ մը ճանձրոյթներու, յուսահատութիւններու կ'ենթարկէ իր անձը : Պէտք է որ դատողութիւնը և կամքը իբր չանթարդել ծնունդին :

Բայց, լաբէ, ամեն տեղ չանթարդել չ'ըրուիր, և երբեմն անտեղեկ կէտի մը վրայ չանթանար կ'ըլլանք :

Շանթէն վախճանք ուրեմն և աշխարհային փոխորիկներէն փախչենք :

Թող երիտասարդ ընթերցողներն և ընթերցողներս չմոռնան երբեք որ չանթի հարուած մը կաղնիներու սիրտը կ'այրէ, և բաննէն ազուար ծաւերը վայրկեանապէս կը կործանէ :

Տիկին Ա. սոյն Դեպ

(Թարգմանեց)

ՄԵՐԱՅԻՆ ՆԱԼԳԱՆՆԵՐ

Դատար-գրքով

Լ Ե Ր Ծ Ո Ւ Յ

Ես դեռ կ'երգեմ զգացումներս իմ բոլոր, ծաբս, վիշտըս ու յուզումներս անշատակ, ես ջիղերուս զրգիւնները մշտագոյն, Ուրեք յաւետ կը քրքուան կուրծքին տակ :

Կը նուագեմ խոովքները դառնագին Հիւանց սրտիս, տարտամ տրտիւն յուսաճատ, Վայրկեանները յոյզի, վշտի իմ կեանքիս կ'ողբերգեմ ես, դալկացումս անվրձնաւ . . . :

Գրգիւնները կեանքի անոյլ պատրանքին, Յուզումներու, տենցանքներու բխրաւոր խոովքները կը ծովանան վշտագին, Հիւսիսատար կուրծքիս տակը վիրաւոր :

Ես... դեռ կ'երգեմ, անոյլ, անփոյր հատնուած... Հնգոյս կրած տագնապները բոցեղէն, Հեղեղանման վրդովները հրակեղ, ես կ'երգեմ դեռ Անզգային յամբօրէն . . . :

Օ. ԲԱՄԵՆԻՍ.

ՅՈՒՇԱՏԵՏՐԻՍ ԷԶԵՐԷՆ

[30.60.12.1]

Երկուշաբթի

1904

Կենքից իր մոտակամացուն ի հասակէի 365 տ. ւուրց, ի խոր սուգ համակելով նադեւա-
փալիլաշուք օրիորդները, անվճար պօսնոնե-
րը, նշանածէն առնիլիք դրամօժիտը չյա-
ջողցնող երիտասարդները, ամսական մը նը-
ւէր չաւնող վարժապետները, ամուսնու-
թեան մէջ չլաջողող վարժուհիները, անամը-
նաց ուհիները, հարսերէն չախ և . . . ծեծ
ուտող կեսուրները, փեսերնուն երեսէն խա-
նութիւն սերմայէն փճացնող աներ պապսնե-
րը և ամէն անոնք, որոնք Մոռնդէին վիզի-
թի պտրտելու համար պոյայը լոյօթերնուն
վրայէն լասթիք մը չունին:

Յուդարկաւորութեան տխուր արարողութիւնո կատարուեցաւ ուրբաթ դիշիւր ժամը՝ աստերկուքին, ու մարմինը տափովուեցաւ անծայրածիր միջոցին մէջ։ Ներկաներուն մէջ կը նշմարուէին ի մէջ այլոց այլասիւիի՝ լաթէշնամանները, գուշար գումուլարները, անուշապուրի թէնսիւրէն, Ալքատախնամի պտրտողները ևն.:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Արճաճագրութեան բաժինը

1905 Նորածագեան , որդի 1904
Վերջացողանի ծնաւ ուրբաթ գիշեր ժամը
տաս երկուքին: Աստուած բարի պտուղ դա-
ւակ ընէ:

Երեքշաբթի

Երկու շաբաթէ ի վեր օրաթերթերու եր-
րորդ էջին մէջ կր կարդանք շարքը այն
ազնիւ անձնաւորութեանց, որոնք Յիսուսի
աշխարհութենէ զերծ մնալու համար ի հնց
սիրայօժար նուէրը չեն զլացած Հիւանդա-
նոցին :

Այս սովորութիւնը որչափ քաւելի պի-
տի ըլլար, երբ ամէնք ալ հետեւէինք այդ
խելացի նուիրատուութեան, ու փոխանակ
գամկողի պէս դուռէն դուռ պատկելու այս
խիստ օղբոուն, քսան շրուշի համեստ
վճարումով մը Ծնունդի կիրակիները անք

վառարանին մօտ անցնէինք, պզտաժամ ըլ-
լալով, նոր գգնածիք կօշիկէն հասաքի, չսգե-
նաքի, փողկապի, և և ուրիշ նմանօրինակ
ծախքերէն, որոնց հիմնովին օրին ու աւել
լորդ ըլլալը գիտնալով ճանդերմ, ափսոս
որ կը կրկնենք ու կը կրկնենք, Դգալ մը
անուշ, դաւաթ մը քօնկաք, իրկու խօսք
օրուտն եկեղեցիէն վրայ, խօսք մը օգնեցու-
թաբանութեան վրայ, կէս խօսք ասարւոյն-
մէջ պատահած հիւանդութեանց վրայ, և
այս ամէնը փոխան չորս հինգ ուկիկ ծախ-
քի մը, մինչդեռ երբ հաստատութեան քսան
ըրուշ տըսի, թէ պատողը և թէ տոտնը
ընդունողները հանգիստ կրնան ըլլալ, ինչ-
պէս նաեւ մարմինները, որ ենթակայ են
ամէն տեսակ հիւանդութեանց, մանուսանդ
Յուսկարի սա սարքազդեցիկ օգնելուն ։
Սակայն և այնպէս գիտեմ թէ այս տողերը
կարդացած ժամանակնիդ արդէն լրացած
պիտի ըլլայ այս խնդիրը . . . Մեր յոր-
դորը գալ տարուան գոնէ տղէկցութիւնը ը-
նէր ։

Զորեքշաբթի

Թեթևեւութիւնը այսպանելի և ծանրութիւնը, լրջութիւնը գովելի յատկութիւններ ըլլալով հանդերձ, երկուքին միջև երբեմն տիրող ծայրայեղութիւնը ծաղրական կ'ըլլայ : Դիտեցէք, մեր շուրջը երբեմն կը հանդիպինք անանկ անձնաւորութեանց , որոնք իրենց իսկական արժանիքէն, դիրքէն և աստիճանէն քառապատիկ վեր ու բարձր կը դասեն ինքզինքնին, Բայցէս սր իրենցմէ վեր մէկը նոյն իսկ չկրնար համարձակիլ ռարեւ մը, ակնարկ մը ձգել անոնց վրայ, երբ ճամբան հանդիպի այդ կարգի անհատներու : Կոկողավիզ ու հպարտ հովը միշտ վրանին, արագիւններու պէս վզերնին տնկած՝ երկինքները քննելով, զննելով կը քալեն ու հանդիպած ծանօթնին չտեսնալու զարնելու համար շատ անգամ անդին կը նային, Ժամացոյցնին կը հանեն վրան կը նային, դժպտանին ծալած մէկ թուղթերնին կարդալով կը զբաղին, մինչեւ որ այդ անձը կամ ծանօթը մօտեցնուի անցնի, ու չբարեւեն չի տեսնան :

Աստուք, այսինքն այս կարգի անհատները
ընդհանրապես «վերջին տեսած» դասակար-
գին կր վերաբերին, կամ հարտուտ այդա-

կանի մը ձգած ժառանգէն, և կամ կոյր քաղզին մէկ կատակէն ձեռք անցուած վաղանցուկ դուռարէն վերականգնած կ'ըլլան, և ահա կը սկսին երկինքները համբուրել, աչքերնին վեր տնկել, և աւելին, մոռնալ իրենց ժամանակակից բարեկամները, ծանօթները, նոյն խոսք անոնք, որոնք ող գիտէ իրենց նեղ օրերուն հինգ տասը զրուշի օդնութիւն մըն ալ հասցուցած են իրենց:

Չէք ծիծաղիր երբ հանդիպիք այդ կարգի անհասներու: Իմ մասիս, ոչ թէ ծիծաղ, ևր յաւիմ, կը կարեկցիմ, սրովհետեւ այսօրիսները ինձ համար հիւանդներ, մահացու կմալքներ են, քաղզին խաղալիքները, որոնք ոչ թէ միայն այսօրուանին՝ այլևս վաղուանին վրայ վստահութիւն չունին: Բայց չեն գլխար խեղճերը, գինովներ են աւանդ, թմրած մարմիններ, որոնք երազներու մէջ տարուբեր, իրենց բուն վիճակին գիտակցութիւնը չունին:

Priez pour eux!

Հինգ շաբթի

Յաջողելու և չահու միակ աղբիւրը, միջոց՝ անուն մը չինելն է:

Ու եւ է գործի մէջ, մարդ երբ անուն մը չինէ, իր համար ալ բանի մը պէտք չունենար, յաջողութիւնը ձեռքէն բռնած կը տանի, կ'առաջնորդէ ենթակայն անդգալաբար:

Մեր մէջ կարդ մը գրչի մշակներ ունինք, որոնք առ ի չգոյժ լաւագոյնին հրապարակի վրայ ձեռքէ ձեռք կը քաշուին, և իրենց մէկ ցափուտութիւնը՝ տասը, քսան, քառասուն մինչեւ քսան փրանքի կը բարձրացնեն ու իրենք վճարողներու քիթին խընդալով՝ չորս թուղթ կը մրտեն ու երեսունը կը նետեն ամէն անոնց, որոնք յաջողութիւնը, վստահելը այդ մուրտներէն կը սողան:

Այսօր այնինչ թերթը իր էջերուն առաջին սիւնակներուն մէջ կ'ըսեն, այնինչ հրաշակաւոր և անուանի մասնագէտը, սիրայօժար (.) յանձն առած է թերթիս աշխատակցութիւնը, եւն: Եւ կամ,

«Ուրախ ենք յայտարարելու թէ՝ այնինչ սիրուած գրչը, յետ այսօրիկ ամէն թիւի միտի աշխատակցի, հաճոյք մը պատճառե-

լու համար մեր բազմաթիւ (.) քննարկողներուն, եւն:»

Եւ ահա այդ չփայած գրչը, հաղիւ երկու էջ բան մրտած թէ չէ, բօսքան կը կրտրէ, ու ալ չերեւիր, կ'աներեւութանայ այդ թերթին մէջ, մինչդեռ անդին ուրիշ թերթ մը կը սկսի իր շառախմանս ունիւմը, «հաճոյքով կը փութանք գիտցնել մեր գերագնիւ ընթերցողաց թէ, այսինչին աշխատակցութիւնը ապահոված ենք և այսուհետեւ յաջորդաբար պիտի երեւին իր չքնադագիւս (.) գրութիւնները, եւն:»

Եւ սակայն խաբուողները, ընթերցողներէն առաջ նոյն այդ սեքլամենթը շռայլօղները կ'ըլլան, ու անդին չփայած յօդուածագիրը իր գրչը տպարանէ տպարան կը թափխէ միշտ աւելցնելով իր թարգմանածոյ յօդուածներուն սակը:

Ժողովուրդին քիթին խնդալը, և խորհուրդն և՛ քալամենթը լուրջ խմբագրութեան գործեր չեն, և ամէն մարդ չկրնար նոյնը ընել, և ընողն ալ կարծեմ բարեկենդանի մասխառաւ ըլլալէն զատ բան մը չի չահիր:

Ուրբաթ

Տարւոյն էն խիտ ամիսը, ներկայ Յունվարը ըլլալով հանգերձ, իր խստութիւնը, ցուրտը և տաղտուկը կը փարատի շնորհիւ անուաններու տօնախմբութեանց շարքին որ կը սկսի բուն այս եղանակին:

Ընտանեկան սիրուն երեկոյթներ, ալ կը սկսին ծայր տալ այս ամիսին մէջ, բան մը որ երկուեւ երեքասարդութեան հացին իւղ կը քսէ և բուն անուան տիրոջ քսակին ալ զաւջ եաղի:

Միւսիւ կոմիտաններու և օրիորդ Բուրուլիկներու ցատկաւորքին համար խեղճ տանաէրները ալ կը սկսին գիշեր ցերեկ ուտելիք խմելիք կրել, որպէս զի ան աս ուտել խմելէ վերջ, հոս հոն տարածեն իրենց բամբասող թունաւոր լեզուներն:

Երեկոյթը կը հասկնամ և կընդունիմ անոր դոյութիւնը, բայց անոր յաջորդող սա անհրաժեշտ բամբասանքը չեմ հասկնար ու չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս այդ ուտող խմող բերանները կը լարուին ամէն անոնց հասցէին, որոնք տարբար էին այդ դուռնաթիւնը, երեկոյթը:

Ասիկա պարզապէս աղիւթութիւն է կամ բռն բառով անկրթութիւն է, բարեկամներս Ամէն երեկոյթ անպատճառ իրեն յաջորդող բամբաւանքը կ'ունենայ. ես կը կարծէի թէ այս աղեղ սովորութիւնը միմիայն կրնարու մէջն է, բայց համոզուեցայ թէ պիտապատկառ էրիկմարդիկ ալ սնունդմէ վար չեն մընար բամբաստնքի մասին և թէ կրնամ ըսել թէ կրնանուն ալ քար կը հանեն, այնքան վարպետ են այս ճիւղին մէջ:

Երանի անոր որ ոչ երեկոյթ կը սարքէ և ոչ ալ կը սիրէ ներկայ գտնուիլ այդ տեսակ ընտանեկան հուաքոյթներու, փրկելով ինքզինքը, ուսելէ և ուսուելէ:

Շարքար

Մա նոր տարւոյն առթիւ մի քանի խորնգրանքներ ունիմ, որոնց իրականացմանը ջերմ փափաքողներէն եմ: 1905 տարւոյն մէջ կուզեմ:

Նախ Բրետի Ֆոնսիէի առաջին պարզեւը, ընտելեամբ և բարոյականով հարուստ աղջիկ մը 18—20 տարուբեր, կոյր և յամբ ղոքանչ մը, վահան Փափագեանին բարեկամիս՝ Մորց Վրեծիւն պէս համով վէպ մը, Կալուսչին քսան ոսկի զրամագլուխով ակսիքի մը խանութ, որպէս զի ուրիշները Պարոնեանի յաջորդը անուանելէն և այս առթիւ ինքզինքը երազային ինքնակոչութենէն ազատէ: Յ. Ալփիարին Le Rireի և Fin de Siècleի ապօնման մը, վերջապէս Համբարապետակի կարգ մը բաժանորդներուն մանանիսի չափ խիղճ՝ որպէս զի ձրի թերթ կարդալու ամօթալի և տխուր սովորոյթին մոռնան:

Կիրակի

—Ամուսնութեան մէջ կրնարը յարատուութիւն և սէր, իսկ այրերը զուարճութիւն կը փնտռեն:

—Առանց թուալէթի կին մը՝ առանց ոսի կերակուրի կը նմանի, սոսն է կերաուրը կերցնողը ու թուալէթը կրնը ներկակացնողը:

—Աղջիկ մը մինչև իր երեսուն տարիքին կը սիրէ, անկէ ետքը կը նախանձի:

—Նշանտուքը փորձ մը՝ իսկ ամուսնութիւնը փորձանք մըն է սնունդ համար որոնք չահու մը, նպատակի մը համար ճամբայ կ'ելլան:

—Լաւ է մութին մէջ մինակ յառաջանալ քան թէ լուսին մէջ ընկերուիլ:

—Հայելին յոյս կը ներշնչէ, անոր մէջ նայողը անպատճառ միտթարութիւն մը կը դնէ իր ֆիզիքականը փաղաքշող:

ՄԱՌԿՈՒԹ

ՊԱՅԿԵՐՆ

Ի. ԻԳ

Ամեն օր աչքիս դիմն է պատկերդ,
Իր նուրբ ու անօղ գեղեցկութիւնով,
Կայսոյս քառիշէ պրոնզովդ ան իճէ
Աղուոր է վայրեր,
Դիտեմ,
Չինական փայտէ շրջանակին մէջ:

Սեւեակիս պատը զարդարող գորգին
Ու հայշիին ֆով,
Կախած եմ անի,
Որ արքունիի պատկերի աչ միշդ,
« Խաչո՛ր կ'ըլլանի »:

Եթէ մեղք չըլլար, ես անոր դիմաց,
Ամեն օր մէյմէկ մում կը վառէի,
Բայց, աղօթքի տեղ,
Յայտնի քան է որ,
Սեր, սիրտի երգեր ու խօսքեր անշուշտ,
Կը մտնէի:

Աս ըսածներուս՝ կ'ուզե՛ս նե հաւատ,
Հերիք է որ, ես.

Ամէ՛ն անգամ որ քեզ կը կարօտեմ,
Կ'երթամ անոր դիմ,
Ու ա՛յ ժամերով,
Կը նայիմ վրայդ ու չեմ յագեւար,
« Կարօտս առնեմ » կ'ըսեմ ու քեզի,
Կը դիտեմ անա՛նկ խանդով, եռանդով,
Որ,

Պահ մը վերջ, յանկարծ,
Աչքի պատրանքով,
Կը կարծեմ քե ան՝ պատկերդ,
Կը շարժի հոգի ու մարմինս առած:

Ու խորհելով որ, աչ հեղ հիմակ,
Առանձին եմ,

Կը խօսիմ, — իճէ,
— Ե՛ս աչ « չիտեմ »,

Բայց դուն, մի՛շտ պատկեր,
Բարացած ժպիտ մը դիմիդ վրայ,
Անանկ պէս դուն,
Կը նայիս ինձի,
Ու քնա՛ւ,
Չե՛ս խօսիլ,
Ինչո՛ւ . . . :

ԳԱՐՈՒՆ

ՎԱԹԱՍՈՒՆՆԱՅ ՓԵՍԻՆ ՏՐՏՈՒՆՋՐ

Թուղթ մի «Հանրագիտակ»

Աղնիւ խմբագրատան,

Ստոյգ գիտեմ թէ այս պահուն երբ գրաբերս ձեզ ներկայանայ, զձեզ պիտի գրտնէ ընկողմանա՞ծ ձեր գրտեղանին վրայ գրիչի ձեռնին, անշուշտ և անշուշտ «Ծնունդի Վիդիվները» և կամ «Նուէրներէն Վերջ» վերնագիրին տակ մեքենաբար զրաւած պիտի տեսնէ զձեզ արագ արագ լեցնելով ձեռագիրները զորս պիտի յանձնէիք թերեւս գրաշարին, ձեր Ծնունդի թիւին նիւթն ու հիւթը պատրաստելու համար։ Սակայն ներքեցէք որ պահ մը ընդհատեմ ձեր աշխատութիւնը և այս ամիս թերեւս ներկայ գրութիւնս զձեզ ազատէ այն յոգնութենէն, ու նոյնութեամբ յանձնէք ձեր գործաւորներուն, անակնկալ մը ընելու համար ձեր բազմաթիւ ընթերցողներուն, որոնք թերեւս չէին սպասեր սա միջանկեալ և անակնկալ վերնագիրիս։

Երբէք մի վախնաք սիրելիս թէ գրութիւնս կարգացողներ չեն գտնուիր, երբէք եթէ զձեզ չեմ վշտացներ, կրնամ ըսել որ ձեր չաքաթական գրութեան եթէ ոչ տեղը՝ գէթ ծարիրը կրնայ բռնել, պայմանաւ որ ոտքով ձեռքով մէջը չմանաք, ինչպէս կ'ընեն սովորաբար խմբագրատեղաները իրենց անուան ծայրի երեք գիրը արդարացնելու համար։

Ուրիմն վստահ ձեր անկողնակալ և ոչ փառասէր ոգւոյն, կըսկսիմ պատմել իմ վերջին մի քանի տարիներու կեանքս, զորս պիտի ջանամ կարելի եղածին չափ խտացնել խընայելով ձեր սուղ էջերը, մանաւանդ ձեր անդրօտնիկ թերթին երկրորդ թիւին։

Ուրիմն ականջնիդ, խնդրեմ . . .

Անունս կոմիտաս, մականունս Սարսախեան, տարիքս վաթսուէն, յաւրմինս լեցուն, հասակս միջակ, քրտակ ոչ գատարկ, գործս սեղանաւոր, է՛ն կը վաստկիմ . . . ամէն նանկ փառաւոր։

Սիրելիս հաւատացէք որ մարդ ամուրիութեան մէջ եթէ քիչ չառ գրամ գիտեմ

ու իրեն համար անուն մը չինած ըլլայ, աշխարհ զինքը վարդի տեղ զնելով՝ բոլոր մեղուները վրան կը թառնի, ծծելու, օգտուելու, քտմելու համար։

Չար բազդէս, գրամին երեսը ուշ, չառ ուշ տեսանք, երբ մաղկորուս մէջ ձերմակը ինկաւ, այն ատեն յիշայ՝ կրորիկ ոսկիները սկսան գիրար հրելով հրմշտիւիւով քանկա ի վար գլտորիլ, այնպէս որ . . . ինչպէս գիտէք ֆրիլքապէս օգնելէ դաս բարոյապէս ոչինչ արժեք ինձ համար։

Մաքուր հագուստ, կոկիկ գնացքս, լուրջ ընթացքս և . . . զրպանիս տաքուկ կարմրութիւնները հոշակաւ տարածեցին ամէն կողմ, և ամէն անոնք որոնք ուղիս կ'ընտրէր լըմենուն պէս փողոց կը դառնային, սկսան ճամբուս վրայ զիմաւորել զիս պատշաճ յարգանք։ Այն ընտանեկան երեկոյթներուն մէջ, ուր առաջ պատահաբար հանգիպումս ամէնուն զէմքը լէմոնի թթուով մը կը ծեփէր, հիմա մասնաւոր հրաւիրագիրներով կը փափաքին ներկայութիւնս վայելել, ժամկոչները որոնք անտարբերութեամբ չալվարին կը թոթուէին տաճար մտած ստենս, հիմա մինչև փողոցին կէսը կը վազեն հովանոցս առնելու։ Վերջապէս զգալի փոփոխութիւն մը անձիս վրայ կը նշմարելի առանց գիտնալու թէ ինչ էր պատճառը, չուղելով վերագրել տակաւ բարդուող հարցաւորութեանս, որովհետեւ ժողովուրդը և մարդկութիւնը այդքան ծակաչք չէի ճանչնար։

Երկու տարի առաջ, դեռ այսօրուան պէս կը յիշեմ, կիրակի մը եկեղեցիէն դարձիս, տանս պատուհանին տաքիւ նստած ձեր թերթը կը կարդայի, յանկարծ սպասուհիս կնոջ մը գալը և ինձ հետ տեսնուիլ ուղղել իմացուցուց։ Առանձին տան մէջ կին մը ընդունիլ և հետք տեսակցիս թէեւ բնութեանս հակառակ, սակայն և այնպէս հրաւիրեցի այցելուէին ու չառ չանցած կուտաւ ու կը գրէի մը, քառուէ չինուածի պէս ոլոր ոլոր գալով ներս մտաւ օհնեակէս, մինչ ես ուշի ուշով կը զննէի գէմքը ծանոթութեան համար։

Սպորական զգեստ ճոճումները փոխա-
նակում է վերջ, կենը սապէս խօսք առաւ . . .

— Կոմիտայ ազան, հրամանքնիդ էք . . .

— Անոր պէս բան մը, ըսի ժպտադէմ,
մինչ կենը սանկ դէմս բազմոցին վրայ, ե-
կաւ տեղաւորուիլ . . .

— Սյո . . .

— Հրամանքէ՛ք, ըսի անհամբեր, սպասե-
լով որպէս զի կենը ըսելիքը ժամ առաջ
դուրս նսայ . . .

— Հրամանքնիդ ազա՛յ էք, ըսաւ, կնոջ
յառաճ կոտորտուքներով . . .

— . . . Ի պէս բան մը . . . պատեսխանե-
ցի բթիս ասկէն խնդալով, որովհետեւ ա՛յ
խնդիրը հասկցած էի, նորէն ամուսնութեան
կոչ մը կար իմ հասցէիս . . .

— Ձեր տունին յարմար աղջիկ մը կար
տէ . . . Աստուծոյ հրամանաւ խառն ըլլար
. . . պիտի ըսէի . . .

— Հա՛ . . . հրամանքնիդ միջնորդ էք
կարծեմ, ըսի երկար շունչ մը առնելով .
շատ աղէկ, դուք զիս կը ճանչնա՛ք . . .

— Ինչո՞ւ չէ . . . Նիմա . . . քսան տարի
է կը ճանչնամ . . .

— Լաւ գիտէք որ ամուսնութիւնը աւելի
երիտասարդութեան մէջ կը կնքուի, դուք
զիս քսան տարի է ճանչնալով հանդերձ,
ինչպէս ա՛յն ատենէն ի վեր չեկաք, չառա-
ջարկեցիք այս բարեկամսէն դորձ . . . պա-
տասխանեցի յօնքերս վեր, քիչ մըն ալ
սրտնեղած . . .

— Տարի մըն է ձեր աղէկ անունը կը
լսեմ կոր, Աստուած տայ, օր օրի վաստակի
մէջ էք եղեր. Աստուած տա՛հա էվելցունէ,
իշտէ Նիմա մինասիւ կ'ըլլայ, ըսելով եկայ
ձեզ գտայ . . .

— Վայ . . . ըսի, զարմացական չեղալով
մը, ըսելէ դուք ձեր ձեռքին տակ գտնուած
աղջիկները մարդու չէք ի տար, ոսկրի կու-
տաք . . .

— Աս ինչ խօսք է Կոմիտաս աղա, խօսք
առաւ կենը, աչքերը վրաս տնկած, ձեր բա-
րի անունին համար կ'առաջարկեմ կոր, փա-
րային նայողը ով է . . .

— Ասկէ Նինգ տաւր ոտարի առաջ ինչո՞ւ
չեկար կ'ըսեմ կոր քեզի . . . Նիմա մեղքը
չէ՛ աղջկանը, ինծի պէս խռովածի մը կենը
պիտի ըլլայ . . .

— Վո՛ւյ վրադ բարի . . . քսան տարու
տէլիսանքի չեմ փոխեր . . .

— Հի՛մա կ'ըսես կոր . . . առաջ . . .

— Տէ՛ր ողորմայ, տալիք աղջիկներս ան
փախփ մօրը ծոցն էք, Նիմա . . .

Վերջապէս հետնեցի, հասկցայ թէ խն-

դիքը իմ դիրքիս վրայ կը դառնար, այսին-
քն ս'չ քէ անձիս, այլ ի ձեռքն ունեցած
դրամից համար զիս կապել կ'ուզէին այն
անքակտելի շղթայով, ուրկէ ազատելիքս
չիկար, մինչեւ որ փողը չհնչէր ականջիս, ու
չերկնայի մանճակալիս մէջ անշունչ . . .

Սակայն չկորսնցուցի պաղարկութիւնս,
իրաւ ալ պէտք ունէի քնկերուհիի մը որ
զիս դնէր վերջներ իմ այս անկեալ տարի-
քիս մէջ, քանի որ մէկը չունէի զիս միւ-
թարող, Ոսկրներուս վրայ կը նայէի, որոնք
լուսն անիստ կը փախչէին դրամարկզիս մէջ
մէկզմէկուս վրայ դիվուած, ու որոնք թու-
նաւոր օձերու աչքերուն պէս վրաս յառած
կարծես կը հեգնէին ու կը ծաղրէին զիս,
տեսնելով օր օրի բազմապատկուող մազե-
րուս ճերմակները : Որոշուած որոշում էր,
պիտի ամուսնանայի, որովհետեւ պէտք ու-
նէի ատոր . . .

Օր մը Դաւաթիայի պողպատիկին վերնա-
յարկը աղջիկտեսի արարողութիւնը տեղի
ունեցաւ, ալ կրնաք երեւակայել թէ, ինչ
միջավայրէ էր առնելիք մաթանս . . .

Տիկի մը պէս ուռած աղջիկ մըն էր տե-
սածս, որ վերջէն Տիկին պիտի ըլլար : Ծը-
ռածիլ ապրանքներու պէս բամպակներու
մէջ առած էին խուշիկը չորս մատ եւս ու-
ռեցնելով արդէն փշուած մարմինը, սիմթի-
ճիի թապալայի պէս գլխարկ մը, գլուխը ամ-
բողջ փետուրներով ծածկուած, և սակայն դե-
ղեցիկ էր ինչ մեղքս պահեմ, մանաւանդ աչ-
քերը, հաւատացէք Տէր խմբագիր, եթէ ան-
գամ մը տեսնայիք . . . կարելի է ինձմէ
ճարտար փրթելով, առաջ նետուէիք ու իմ
գլուխս պայթող այդ ծանրածանր փորձան-
քը ձեզի պատահեր . . . Ինչ և է, առանց
կարեւորութիւն տալու բերնին երկու կողմը
վառլակող իւղերուն, աչքս խածաւ ու սրբ-
աբա փակաւ : Այդ օրէն ամիս մը վերջ, եր-
կուշարթի օր մը առաջին անգամն ըլլալով
ձեռնոցներ անցուցի մատներուս ու ճերմակ
փողկապ մը վզիս, ու եկեղեցին այդ օրը
այնքան ցուրտ էր որ քանանային «Տէ՛ր ես»ին
որոշ պատասխան մը չկրցի տալ . . . Գոնէ
մանկալ մը դնէին . . . Եկեղեցիէն ելլալ-
նուս, աչքերս ջրտաւ էին, չեմ գիտեր թէ
նովէն, ցուրտէն, թէ յուզումէն էր . . . և
սակայն կուլայի : Այն գիշերը հանդարտ ըլ-
լալուն, առաջատար պարզելու հարկ չմնաց,
որովհետեւ երիտասարդի սաստկաշունչ հո-
վը կը տակսէր մեզ : Զուլիկ յողնած անկիւն
մը կծկտեցաւ ու եւս եկեղեցւոյն ջահերուն
համար տրուելիք ոսկրներուն ոգեւարը քա-
շեցի . . .

Զմուռնամ յիշելու էն կարեւորը : Կնքա-
հայրս, տանկերէցս և ես, մէկ կառք դացած
էինք Եկեղեցի, գերադարձին տանեմէկ

կառքերու շարք մը քաշեցինք մեր հառաքին. ամբողջ հարսին կողմը, որոնք մեծ ու տղա-տիկ եկան ողորդել մեր հանգաբաւ տունը, մինչ ֆուլիկ թեւաւորուած տուն տեղ եւ զած էր ալ իր գերագոյններովը եւ ստա-րագոյններովը:

Աստուտուն երբ ըստ սովորականին կա-նուխ արթննալով վարի սենեակը քաշուե-ցայ նոր փետի գիշերնոցով, հարսնեւորնե-րու ծայրը փրթաւ վերէն, անձանոց դէմ-քեր մեծով պղտիկով եկան ձեռքս խնդրե-լու որոնց կը նայէի առանց ծանշնալու, եւ որոնք գիշերը կեցեր են, առ ալ չեմ գիտեր: Բիշ վերջը ֆուլիկ երբ կանացի հովե-րով սենեակ մաւաւ, մօտս կանչելով հար-ցուցի, — Տիկին, մենք քանի՞ հոգիի հետ պահուեցանք...

— Տէր ողորմայ, ա՛տ ինչ խօսք է, ը-սաւ վիզը մէկ կողմ ծռելով... մերիններն են:

— Հա՛ մերինները... կրկնեցի դարմա-ցական չեչուով մը...

— Էյ մերինները ո՛ւր են... խօսք առաւ հեգնանքով,

— Մերինները, ըսի, մերիններէն ես կամ:

— Ուրիմն մերինները աղէկ որ եկեր են, ասանկ օրի մարդս մարդով կըլլայ:

— Կարծեմ անանկ օրը անցաւ Տիկին, ըստ ալաֆուսնիկային, իքսիրէն վերջը ամէն մարդ պէտք է տեղը դառնայ...

— Որո՞նք... մերինները հարցուց դար-մացմամբ...

— Այո՛, հապա որո՞նք, մերինները...

— Բայց անոնք չէ՞ մի որ մերիններն են, կրկնեց, վստահ եւ որոշ թօնով մը:

— Շատ լաւ, մերինները մերինները եղանալ:

— Տէր ողորմայ... Ի՞նչ կ'ըլլայ, տանը շնորհքը բազմութիւնն է, ըսելով դուրս ե-լաւ սենեակէն ֆուլիկ:

Այդ օրէն սկսեալ, հացագործը վեց վեց ոկսաւ դրել, մաւաճաւոր օրական քառորդ ոչխար, նպարավաճառը խանութ մըն ալ բացաւ մեզ մօտ:

Մեր Տիկինները, որոնք չաքաթը մէկ անգամ կը փոխուէին, թռանվայի ձերբունդ պէս երբեք չբաժնուեցան մենէ եւ եղան բուն մերինները, մինչդեռ իմ կողմէս, փի-սիկ մը, ոպասուհի մը իսկ մնացեալ բազ-մութիւնը ֆուլիկներն էին: Այս բոլորը տարի աղին խմբագիր, քանի որ ես էի պատճառ այս անտանիկի կացութեան:

Նոր փեսայութեան անուշ հովը իմ եւ ընտանացիս վաղանցուկ փայլն ալ ֆուլիկին վրայէն օր օրի կը պակսէր եւ սակայն մե-րիններէն աղեկ մը անգամ չէր շտրվեր տունէն, օգոստոսի տեղեւներուն պէս, ան-շարժ ու մնացական: Ու կեանքիս մէջ ա-ռաջին անգամն ըլլալով անիծեցի ծնունդս:

— Կի՛նկ, տա մերինները տա՛նա պիտի կենօն, հարգուցի օր մը սրանեղած ֆուլի-կին, օր ամսիջատէս հրաղէնի մը բերնէն պտթկացող կատարին ողէս տաք սաք զը-րաս յարձակեցաւ ըսելով: — Անգամ մըն ալ անօնը խօսքը բերանդ տանելու բլլա՛ն նէ, չիտուի Պատարարքարանն եւ կիւայած եղի:

— Հրամսէ՛, իրա՛ւ ես արդեօք ֆուլիկ...

— Հրամսի՛ր ես, իրաւ եմ, չընէ՛ մի...

ալ փրկուած էի, ինքզինքս ազտաւ դրացի: ֆուլիկի այդ մէկ խօսքը կարծես զիս ես տարաւ, դէպ ի ամաւթութիւնս, արձակ համարձակ օրերս, ուր կ'ապրէի, ինչպէս կ'ապրին դաշտին հողատատակները, անտա-սին թռչունները, թռչիւթ թռչիւթ, ճիւղէ ճիւղ ոստոռակով: Սակայն եւ այնպէս վստահ չէի այդ փրկարար խօսքին վրայ: Անգիրը բոժոժը կախելուն մէջ կը կայանար:

Ալ երկուքիս միջեւ արագ ընտանեկան ցուրտը սաւ կապած էր, ու սրտերնիս այն-քան պապած էր մէկ մէկու հանգէլ:

Օր մը յանկարծ դուռը զարնուեցաւ: Երկու բռնակիրներ էին: Բացի պատուհա-նը եւ հարցուցի. — Ո՞վ կ'ուղէք, ի՞նչ կայ:

— Տուտուն կանչեց աղաս, կրկնեց բան կայ եղեր...

— Նա՛ղը կրկնեք ծօ՛, գայէք բաներնիդ ըսի, ու հալիւ խօսքս աւարտած թէ չէ... վերէն հաղէնիմ ձայն մը,

— Ես ապապրեցի, թող վեր դան, վեր, վեր: ֆուլիկին ձայնն էր եւ անոր հրամայու-կան չեչուր: Դուռը բանալով հօտէն քաշ-ուեցայ անկիւնս աւ սկսայ ուշի ուշով գի-տել այս անակնկալ պատահարը:

Կէս ժամէն բռնակիրները ծրարներով ծանրաբեռնուած դուրս կելլային դռանէն: Դիտեցի տունը բաւ մը արդելք մը յարու-ցանկելու: Հուսկ յետոյ երեք կառք մօտե-ցան տունին: Շատ չանցած իրեցները, մե-րիցները, ձերիցները զիրար հրելով դուրս ե-լան, մինչ ես դեռ կը դիտէի անցած դար-ձածը: Եւ ի՞նչ կը յուսաք որ ընէ մեր Տիկին ֆուլիկ Սարոսիսեանը: Դուրսը չալ մը առած իր տ-մէնաւուր քոթիւմով, վարը պատուհանին առջեւ դալով, գլուխը սանկ վեր, ձեռքովը բարեւ մը սարքելով նա սանա կուկուկի ձեռով մը հրաժեշտ տալով ինքն ալ իրեն-ներուն հետ կառքը ցատկեց...

Երբ այս անակնկալ պատահարին ամթիւ եկեղեցին մոմ վառելու համար դուրս կ'ել-լայի, կառուպանները զիս դիմաւորելով,

— Ազատ, Տիկինը ըսաւ քի աւապաճի-ներուն քիրաները աստ, բաղնիք տարինք, իրիկուան ալ պիտի ոռնենք բերնիք...

